ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

14 ապրիլի 2025թ. թիվ 381

Ի.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ, Ն.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ԵՎ
Ա.ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԴԱՍԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 12-րդ և 22-րդ կետերով, հիմք ընդունելով Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետներ Իրինա Մարտիրոսյանին, Նաիրա Համբարձումյանին և ավագ մասնագետ Անի Ղազարյանին ս/թ ապրիլի 14-ից 16-ը ներառյալ՝ երեք օրով թույլատրել մասնակցելու Երևան քաղաքում՝ «Դեմոկրատիան այսօր» ՀԿ-ի կողմից կազմակերպված «Կանանց դեմ բռնության ընկալումը» թեմայով դասընթացին:
2. Գործուղման հետ կապված ծախսերը վճարում է հրավիրող կողմը:
3. Գործուղման ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ «Mulberry» համակարգով ներկայացնել հաշվետվություն՝ ըստ սահմանված կարգի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
14/04/2025

X
ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

2025թ. ապրիլի 14
ք.Վանաձոր